

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների ղեկարների ընտրության, հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

1. << Եղեգնաձորի մշակույթի կենտրոն >> ՊՈԱԿ-ի տնօրեն

2. <<Եղեգնաձորի երաժշտական դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրեն

Տնօրենի ընտրության (նշանակման)

1) պարտադիր պայմաններն են՝

ա. բարձրագույն կրթություն՝ երաժշտական արվեստ և կատարողական արվեստ մասնագիտությամբ

բ. ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

գ. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, համապատասխան ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր).

դ. կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն,

2) լրացուցիչ պայմաններն են՝

ա. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

բ. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

դ. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ իմացություն.

ե. ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

զ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Մրցույթը կանցկացվի 2017 թվականի հունվարի 20-ին՝

1. << Եղեգնաձորի մշակույթի կենտրոն >> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար՝ ժամը 11:00,

2. <<Եղեգնաձորի երաժշտական դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար՝ ժամը 14:00 :

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող Աշխատակազմին ներկայացնում են՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3x4 չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) կադրերի հաշվառման թերթիկ (լրացված).

7) տեղեկանք մշտական բնակության վայրից.

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում).

9) բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել):

9. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9<sup>00</sup> -12<sup>00</sup> , բացի շաբաթ և կիրակի օրերից:

*Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ը:*

*Մրցույթը կկայանա Վայոց ձորի մարզպետարանի շենքում (ք.Եղեգնաձոր, Շահումյան 5): Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ (Շահումյան 5, անձնակազմի կառավարման բաժին, հեռ. +374281-2-55-95):*